



Փետրվարի 13-ին Հայ առաքելական եկեղեցին նշում է Տյառնընդառաջը, որը Հայոց եկեղեցու տոներից է: Տյառնընդառաջի տոնը համընկնում է Քրիստոսի աստվածահայտնությունից (հունվարի 6) քառասուն օր հետո ժամկետին և նշանակում է <<ելնել Տիրոջն ընդառաջ>>: Հայոց եկեղեցու կանոնի համաձայն՝ տոնի նախօրեին՝ երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է նախատոնակ: Այն ավետում է Տերունի տոնի սկիզբը: Սովորաբար նախատոնակի արարողության ավարտին կատարվում է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են աշխարհի 4 ծագերը: Անդաստանին հաջորդում է մոմերի օրհնության արարողությունը: Եկեղեցուց վերցրած կրակով եկեղեցիների բակերում վառվում են խարույկներ՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ և այդ խարույկների վրայով ցատկում են նորապսակ զույգերը: Տյառնընդառաջի օրն առաջին անգամ Բյուրեղավանի քաղաքապետարանը կազմակերպել էր քաղաքային շքեղ տոնախմբություն: Քանի որ քաղաքում դեռևս չկա եկեղեցի և այս պահին ընթանում է Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցու շինարարական աշխատանքը, միջոցառումը տեղի ունեցավ քաղաքապետարանի դիմահայաց հրապարակում, որը կոչվում է երջանկահիշատակ Վազգեն Ա Վեհափառի անունով: 15 նորապսակներ իրենց հարազատների հետ մասնակցեցին Տրնդեզի արարողակարգին: Քաղաքապետ Հակոբ Բալասյանը շնորհավորեց նորապսակ զույգերին, մաղթեց անսահման սեր ու երջանկություն.<<Սիրելի նորապսակներ շնորհավորում են Ձեզ այս գեղեցիկ տոնի կապակցությամբ: Թող խաղաղություն թևածի բոլորիդ նորաստեղծ օջախներում>>: Քաղաքապետ Հակոբ Բալասյանի կողմից նորապսակները ստացան նվերներ, ծաղիկներ և օրվան համապատասխան մոմեր ու տարոսիկներ: Տեր Արսեն քահանա Համբարձումյանի կողմից կատարվեց օրհնության կարգ, որ սկսվեց <<Հայր մեր>> աղոթքով: Տեր հայրը շնորհակալություն հայտնեց քաղաքապետին այս նախաձեռնության համար. <<Դեռևս չունենալով եկեղեցի կարողանում եք պահել ու պահպանել եկեղեցական ու ժողովրդական տոները: Սա շատ կարևոր ու ողջունելի քայլ է: Շնորհավորում են, Աստված բոլորիս պահպան>>: Օրհնության կարգից հետո տեղի ունեցավ խարույկավառությունը: Օրվա հերոսները պատվեցին խարույկի շուրջ և ցատկեցին կրակի վրայով: Միջոցառման համերգային մասն ապահովեցին քաղաքի երիտասարդ կատարողներն ու արվեստի դպրոցի պարուհիները: Միջոցառումն այսուհետ կդառնա ավանդույթ: Ն.Ս.Օ.Տ.Տ Պարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ Տյառնընդառաջի տոնի օրը հռչակվել է նաև Նորապսակների օրհնության օր:

14.02.16.